



ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2017թ.

N 1 -Ս

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հունվարի 19-ի «Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու մասին» ՆՀ-7-Ն հրամանագիրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի անդամներին և աշխատակազմին, հանրաքվեի տարածքային հանձնաժողովներին՝ ապահովել ժամանակացույցով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը և հանրաքվեն պատշաճ մակարդակով կազմակերպելու աշխատանքները.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի քարտուղար Ս.Մելքումյանին՝ կազմակերպել սույն որոշումը եռօրյա ժամկետում համապատասխան շահագրգիռ գերատեսչություններին և պատասխանատու կատարողներին ուղարկելու աշխատանքները:

3. Սույն որոշման կատարման ընդհանուր վերահսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ Ս. Արզումանյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԶ

Ս.ԱՐԶՈՒՄՅԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի
 նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների**

N	Միջոցառման բովանդակությունը	<Հանրաքվեի մասին> ԼՂՀ օրենք (ՀՄՕ), ԼՂՀ ընտրական օրենսգրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)՝ 2017թ.	Կատարող(ներ)ը
1	Դիտորդների հավատարմագրում իրականացվում կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարվում է. հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան տասն օր առաջ՝ տեղական դիտորդների համար և մինչև քվեարկության օրը՝ միջազգային դիտորդների համար	ՀՄՕ 11, կետ <ժբ> ՀՄՕ 22, մաս 3 ԸՕ 30, մաս 2	Հունվարի 20-ից մինչև փետրվարի 10-ը և մինչև փետրվարի 19-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
2	Դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին հանձնվում են. դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օր հետո	ԸՕ 30, մաս 3	Հունվարի 21-ից մինչև փետրվարի 20-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
3	Համաժողովրդական քննարկումներ կազմակերպելու նպատակով հանրաքվեի դրվող նախագիծը հրապարակվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 25 օր առաջ	ՀՄՕ 7, մաս 8 ՀՄՕ 11, կետ <ժա>	Մինչև հունվարի 26-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
4	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների անդամների և դիտորդների համար ուսումնական ձեռնարկներ հրապարակվում են. հանրաքվեի անցկացման ժամանակահատվածում	ԸՕ48, մաս 1, կետ 15	Հունվար-փետրվար	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
5	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ստեղծվում է. հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից	ԸՕ 28, մաս 1	Հունվարի 20-ից	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով

6	<p>Հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածը սկսվում է .</p> <p>հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից և ավարտվում քվեարկությունից մեկ օր առաջ</p>	ՀՄՕ 20, մաս 3	Հունվարի 19-ից մինչև փետրվարի 18-ի ժամը 24.00-ն	Քարոզչություն կատարողներ
7	<p>Հանրաքվեի շտաբները կարող են կազմավորվել.</p> <p>հանրաքվե նշանակվելուց հետո</p>	ԸՕ 18, մաս 5	Հունվարի 20-ից	Քարոզչություն կատարողներ
8	<p>Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար հատուկ տեղեր հատկացնելու մասին որոշում ընդունվում է.</p> <p>հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում</p>	ՀՄՕ 20, մաս 8 ԸՕ 20, մաս 3	Մինչև հունվարի 23-ը	Համայնքի ղեկավար
9	<p>Քարոզչություն կատարողներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (շրջվարչակազմերից և Ստեփանակերտի քաղաքապետարանից ստացված) հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով ներկայացվում և կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է.</p> <p>հանրաքվե նշանակվելուց հետո` ցանկը ստանալու օրը</p>	ԸՕ 18, մաս 3	Սկսած հունվարի 19-ից	Շրջվարչակազմերի ղեկավարներ, Ստեփանակերտի քաղաքապետ, Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
10	<p>Հանրաքվեի տեղամասերը և տեղամասային կենտրոնները (այդ թվում` Հայաստանի Հանրապետությունում ԼՂՀ մշտական ներկայացուցչությունում, ինչպես նաև կալանավորված անձանց պահելու վայրերում) կազմավորվում են.</p> <p>հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 21 օր առաջ</p>	ՀՄՕ 8 ¹ , մաս 6 ԸՕ 14, մաս 1 15, մաս 4	Մինչև հունվարի 29-ը	Ոստիկանություն` համայնքի ղեկավարի, հանրաքվեի տարածքային հանձնաժողովի անդամի մասնակցությամբ, ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցչություն, քրեակատարողական հիմնարկի ղեկավար
11	<p>Հանրաքվեի տեղամասերի հերթական համարները սահմանվում և այդ տվյալները հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>սահմանվելուց հետո` երկօրյա ժամկետում</p>	ԸՕ 49, մաս 1, կետ 2	Մինչև հունվարի 31-ը	Հանրաքվեի տարածքային հանձնաժողով
12	<p>Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովները կազմավորվում են.</p> <p>հանրաքվեի անցկացման օրվանից ոչ շուտ, քան 19 և ոչ ուշ, քան 16 օր առաջ</p>	ՀՄՕ 8 ¹ , մաս 8	Փետրվարի 1-ից մինչև փետրվարի 4-ը	Հանրաքվեի տարածքային հանձնաժողովի անդամներ

13	<p>Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի առաջին նիստը կայանում է. հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում</p>	ԸՕ 42, մաս 5	Փետրվարի 3-ից մինչև փետրվարի 6-ը	Հանրաքվեի տարածքային հանձնաժողովի նախագահ, Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի տարիքով ավագ անդամ
14	<p>Հանրաքվեի քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով քարոզչության հիմնադրամներ ստեղծվում են. հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից հետո</p>	ՀՄՕ 21, մաս 1 ԸՕ 25, մաս 1	Հունվարի 20-ից	Քարոզչություն կատարելու իրավունք ունեցողներ
15	<p>Հանրաքվեի քարոզչության հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք ներկայացվում է. հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ եռօրյա պարբերականությամբ</p>	ՀՄՕ 21, մաս 6 ԸՕ 25, մաս 6	Հունվարի 20-ից սկսած՝ 3 օրը մեկ	Բանկեր, որտեղ բացված են հատուկ հաշվեհամարներ
16	<p>Նախորդ կետում նշված տվյալներն ամփոփվում, դրանց վերաբերյալ ամփոփ տեղեկանք կազմվում և կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է . ողջամիտ ժամկետներում</p>	ԸՕ 25, մաս 6	Տեղեկանքը ներկայացնելուց հետո	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի վերահսկիչ- վերստուգիչ ծառայություն, Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
17	<p>Քարոզչության հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը՝ ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերով, հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում են . քարոզչությունն սկսելուց հետո՝ տասներորդ օրը, ինչպես նաև հանրաքվեի արդյունքների ամփոփման համար՝ սահմանված ժամկետից ոչ ուշ, քան երեք օր առաջ</p>	ԸՕ 27, մաս 1	Սկսած հունվարի 28-ից, փետրվարի 20-ին	Քարոզչության հիմնադրամ բացած քարոզչություն կատարողներ
18	<p>Քարոզչության հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերն ստուգվում, ստուգման արդյունքներով տեղեկանքը կազմվում և այն հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում. հայտարարագրերը ստանալուց հետո՝ երկու օրվա ընթացքում</p>	ԸՕ 28, մաս 3	Սկսած հունվարի 30-ից, փետրվարի 20-ից մինչև 22-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի վերահսկիչ- վերստուգիչ ծառայություն
19	<p>Քարոզչության հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում</p>	ԸՕ 27, մաս 4	Սկսած հունվարի 31-ից, փետրվարի 20-ից մինչև 23-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով

20	Վերահսկիչ- վերստուգիչ ծառայության տեղեկանքը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է. հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նիստում քննարկելուց հետո	ԸՕ 28, մաս 3	Նիստից անմիջապես հետո	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
21	Քարոզչության հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառույթները դադարեցվում են. քվեարկությունից մեկ օր առաջ	ՀՄՕ 21, մաս 6	Փետրվարի 19-ից	Քարոզչություն կատարողներ, բանկեր
22	Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է. քարոզչության վերջին 3 օրվա ընթացքում	ՀՄՕ 20, մաս 9	Փետրվարի 16-ից մինչև փետրվարի 18-ը	Մոցհարցումն իրականացնող կազմակերպություններ, պատվիրատուներ
23	Զինվորական մասերում հաշվառված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը ուստիկանություն և հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 21 օր առաջ	ՀՄՕ 8 ¹ , մաս 7 ԸՕ 8, մաս 10	Մինչև հունվարի 29-ը	Պաշտպանության նախարարություն
24	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը տեղամասային կենտրոնում` բոլորի համար տեսանելի տեղում, փակցվում է. հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ	ՀՄՕ 8 ¹ , մաս 9	Մինչև հունվարի 30-ը	Ոստիկանություն
25	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները` ըստ հանրաքվեի տեղամասերի, համացանցում` ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են. քվեարկության օրվանից 2 օր առաջ	ԸՕ 11, մաս 2	Փետրվարի 18-ին	Ոստիկանություն
26	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները` էլեկտրոնային կրիչով հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովին տրամադրվում են. քվեարկության օրվանից 2 օր առաջ	ԸՕ 10, մաս 4	Փետրվարի 18-ին	Ոստիկանություն
27	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվի վերաբերյալ (ըստ ընտրատարածքների և տեղամասերի) հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովին տեղեկանք տրամադրվում է. քվեարկության օրվանից տասն օր և երեք օր առաջ	ԸՕ 10, մաս 2	Փետրվարի 10-ին և փետրվարի 17-ին	Ոստիկանություն
28	Քվեարկության օրվանից տասն օր առաջ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվի վերաբերյալ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա քվեաթերթիկները տպագրվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան ինը, և ոչ ուշ, քան երեք օր առաջ	ՀՄՕ 25, մաս 4 ԸՕ 56, մաս 6	Փետրվարի 11-ից մինչև փետրվարի 16-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
29	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիները քվեարկությանը մասնակցելու համար լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում ոստիկանություն ներկայացնում են. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան յոթ օր առաջ	ԸՕ 8, մաս 5	Մինչև փետրվարի 13-ը	ԼՂՀ հաշվառում չունեցող ԼՂՀ քաղաքացիներ, Ոստիկանություն

30	Քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրն ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում ուստիկանության կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացվում են. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան յոթ օր առաջ՝	ԸՕ 8, մաս 3	Մինչև փետրվարի 13-ը	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ԼՂՀ քաղաքացիներ, Ոստիկանություն
31	Ըստ հաշվառման վայրի ցուցակից քաղաքացու տվյալները հանելու և նրան ըստ գտնվելու վայրի հանրաքվեի տեղամասի լրացուցիչ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ տեղեկանք տրամադրվում է. դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում	ԸՕ 8, մաս 3	Մինչև փետրվարի 13-ը դիմելու դեպքում	Ոստիկանություն
32	ԼՂՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները կազմվում են. հանրաքվեն նշանակելուց հետո՝ մինչև քվեարկության ավարտը	ԸՕ 8, մաս 4	Հունվարի 20-ից մինչև փետրվարի 20-ի ժամը 20.00-ն	ԼՂՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն
33	Քաղաքացին ընդգրկվում է քվեարկության օրը ԼՂՀ-ում գտնվելու վայրի մոտակա տեղամասի լրացուցիչ ցուցակում և այդ մասին նրան տրամադրվում է տեղեկանք. դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում	ԸՕ 8, մաս 5	Մինչև փետրվարի 13-ը դիմելու դեպքում	Ոստիկանություն
34	Իրեն հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում ընդգրկելու մասին դիմում ուստիկանություն ներկայացվում է. քվեարկության օրվան նախորդող չորս օրվա ընթացքում՝ մինչև քվեարկության ավարտը	ԸՕ 12, մաս 2	Փետրվարի 16-ից մինչև փետրվարի 20-ի ժամը 20.00-ն	Յուրաքանչյուր ոք
35	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում ընդգրկվելու մասին ուստիկանության տեղեկանքի հիման վրա ցուցակում լրացում կատարվում է. քվեարկության օրը՝ լրացուցիչ ցուցակ կազմելու միջոցով	ԸՕ 12, մաս 2	Փետրվարի 20-ին՝ մինչև ժամը 20.00-ն	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
36	Հանրաքվեի ժամանակ պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները ծառայությունից օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու դեպքում հանվում են զորամասի ցուցակից և իրենց մշտական բնակության վայրերում կարող են ընդգրկվել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան յոթ օր առաջ ցուցակում ընդգրկվելու մասին հայտ ներկայացնելու դեպքում	ԸՕ 8, մաս 8	Մինչև փետրվարի 13-ը	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ԼՂՀ քաղաքացիներ, Ոստիկանություն
37	Զինվորական մասում հաշվառված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը զորամասում զինծառայողների համար տեսանելի տեղում փակցվում է. քվեարկության օրվանից տասն օր առաջ	ԸՕ 11, մաս 5	Փետրվարի 10-ին	Զինվորական մասի հրամանատար

38	<p>Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ուստիկանություն ներկայացվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան հինգ օր առաջ</p>	ԸՕ 12, մաս 1	Մինչև փետրվարի 15-ը	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիներ
39	<p>Ընտրական օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ցուցակում անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ կատարվում են և այդ մասին դիմողը գրավոր տեղեկացվում է. դիմումն ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ</p>	ԸՕ 12, մաս 1	Մինչև փետրվարի 16-ը	Ուստիկանություն
40	<p>Քվեարկության օրը հանրաքվեի տեղամասեր գործուղվող ուստիկանության ծառայողների ցուցակը կազմվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</p>	ԸՕ 8, մաս 6	Մինչև փետրվարի 16-ի ժամը 14.00-ն	Ուստիկանություն
41	<p>Ըստ քվեարկության օրը հանրաքվեի տեղամասեր գործուղվող ուստիկանության ծառայողների ցուցակների, ուստիկանության ծառայողներն հանվում են իրենց հաշվառման վայրի ցուցակից, կազմվում է հանրաքվեի տեղամասում քվեարկող ուստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակ. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</p>	ԸՕ 8, մաս 6	Մինչև փետրվարի 16-ի ժամը 14.00-ն	Ուստիկանություն
42	<p>Ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող քաղաքացիների ցուցակը ուստիկանություն ներկայացվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</p>	ԸՕ 8, մաս 7	Մինչև փետրվարի 16-ի ժամը 14.00-ն	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար
43	<p>Ըստ ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող քաղաքացիների ցուցակների, ստացիոնար բուժման մեջ գտնվող քաղաքացիները հանվում են իրենց հաշվառման վայրի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակից, կազմվում է ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող քաղաքացիների լրացուցիչ ցուցակ. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</p>	ԸՕ 8, մաս 7	Մինչև փետրվարի 16-ի ժամը 14.00-ն	Ուստիկանություն
44	<p>Քվեաթերթիկների և հանրաքվեի վերաբերյալ այլ փաստաթղթերի նմուշները ԼՂՀ դիվանագիտական ներկայացուցչություններ կամ հյուպատոսական հիմնարկներ են ուղարկվում. քվեարկությունից յոթ օր առաջ</p>	ԸՕ 59, մաս 1	Մինչև փետրվարի 13-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով՝ Արտաքին գործերի նախարարության միջոցով

45	Կալանավորված անձանց պահելու վայրերում գտնվող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները կազմվում են. քվեարկության օրվանից երեք օր առաջ	ԸՕ 8, մաս 12	Փետրվարի 17-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար՝ հանրաքվեի տարածքային հանձնաժողովի անդամի մասնակցությամբ
46	Քվեարկության օրվա, հանրաքվեի տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիներին ծանուցագրեր ուղարկվում են. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ	ԸՕ 11, մաս 6	Մինչև փետրվարի 17-ը	Ոստիկանություն
47	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների կնիքները հանրաքվեի տարածքային հանձնաժողովներին հանձնվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան հինգ և ոչ ուշ, քան երեք օր առաջ	ԸՕ 57, մաս 3	Փետրվարի 15-ից մինչև փետրվարի 17-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
48	Զինվորական մասերում հաշվառված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները հանրաքվեի տարածքային հանձնաժողովի նախագահին զմուսած ծրարով տրամադրվում են. քվեարկության օրվանից երեք օր առաջ, որը բացվում է միայն քվեարկության օրը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովում	ԸՕ 10, մաս 5	Փետրվարի 17-ին	Զորամասի հրամանատար, Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ
49	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահին հանձնվում է. քվեարկության օրվանից երկու օր առաջ	ԸՕ 10, մաս 6	Փետրվարի 18-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
50	Ոստիկանության կողմից կազմվող ցուցակներն (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ տեղամասերի և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. քվեարկության օրվանից երկու օր առաջ	ԸՕ 10, մաս 3	Փետրվարի 18-ին	Ոստիկանություն
51	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. քվեարկության օրվանից երկու օր առաջ	ԸՕ 11, մաս 4	Փետրվարի 18-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ
52	ԼՂՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը հրապարակվում է. քվեարկության նախորդ օրը	ԸՕ 6, մաս 7	Փետրվարի 19-ին	Ոստիկանություն

53	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովներին քվեաթերթիկները և կնիքների փաթեթները հանձնվում են. քվեարկության նախորդ օրը	ԸՕ 56, մաս 7 ԸՕ 57, մաս 4	Փետրվարի 19-ին	Հանրաքվեի տարածքային հանձնաժողով
54	Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի. քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն	ՀՄՕ 13, մաս 1, կետ <բ> ԸՕ 54, մաս 3	Փետրվարի 19-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Համայնքի ղեկավար, Հանրաքվեի տարածքային հանձնաժողով, Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
55	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են. քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն	ԸՕ 58, մաս 7	Փետրվարի 19-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Վիճակահանությամբ որոշված հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի 3 անդամներ
56	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նիստը սկսվում է. քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին	ԸՕ 61, մաս 1	Փետրվարի 20-ին՝ ժամը 7.00-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
57	Քվեարկության սկիզբը հայտարարվում և քաղաքացիների մուտքը քվեարկության սենյակ թույլատրվում է. քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին	ԸՕ 62, մաս 1	Փետրվարի 20-ին՝ ժամը 8.00-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ
58	Կախված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց թվից՝ կալանավորված անձանց պահելու վայրերում քվեարկությունը կազմակերպվում է. ժամը 9.00-ից հետո	ԸՕ 60, մաս 2	Փետրվարի 20-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
59	Կալանավորված անձանց պահելու յուրաքանչյուր վայրի համար քվեարկության սկիզբը սահմանվում է այն հաշվարկով, որ՝ քվեարկությունն ավարտված լինի ժամը 20.00-ին	ԸՕ 60, մաս 2	Փետրվարի 20-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
60	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում քվեարկությունը կազմակերպվում է. մինչև քվեարկության օրվա ժամը 18.00-ն	ԸՕ 53, մաս 2	Մինչև փետրվարի 20-ի ժամը 18.00-ն	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
61	Հանրաքվեի ընթացքի մասին տեղեկությունները հրապարակվում են. քվեարկության օրը՝ ժամը 9.00-ին	ԸՕ 6, մաս 9	Փետրվարի 20-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով

62	<p>Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ տեղամասում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թիվը հանրաքվեի տարածքային հանձնաժողով հաղորդվում են.</p> <p>քվեարկության օրը, համապատասխանաբար մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը</p>	ԸՕ 6, մաս 9	Փետրվարի 20-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովներ
63	<p>Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ տեղամասում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թվի մասին նախորդ կետում նշված տվյալները ամփոփվում, հրապարակվում և հաղորդում են հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով.</p> <p>նախորդ կետում նշված պարբերականությամբ</p>	ԸՕ 6, մաս 9	Փետրվարի 20-ին	Հանրաքվեի տարածքային հանձնաժողովներ
64	<p>Մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թվի վերաբերյալ տեղեկությունները, ըստ ընտրատարածքների, ԼՂՀ հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նստավայրից կամ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի մամլո կենտրոնից հրապարակվում են.</p> <p>քվեարկության օրը՝ ժամը 12.00-ից մինչև 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ</p>	ԸՕ 6, մաս 9	Փետրվարի 20-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
65	<p>Մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թվի մասին տեղեկություններն ըստ հանրաքվեի տեղամասերի տեղադրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում.</p> <p>այդ տեղեկությունների հրապարակումից հետո(տես նախորդ կետը)</p>	ԸՕ 6, մաս 9	Փետրվարի 20-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
66	<p>Արգելվում է հրապարակել հարցման արդյունքներն այն մասին, թե ում օգտին են քվեարկել.</p> <p>քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն</p>	ԸՕ 21, մաս 3	Փետրվարի 20-ին՝ մինչև ժամը 20.00-ն	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններ, հեռուստաընկերություններ
67	<p>Քվեարկության ավարտի մասին հայտարարվում և քաղաքացիների մուտքը քվեարկության սենյակ արգելվում է.</p> <p>քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին</p>	ՀՄՕ 31, մաս 1 ԸՕ 66, մաս 1	Փետրվարի 20-ին՝ ժամը 20.00-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ
68	<p>Քվեարկության արդյունքների աղյուսակավորումն (ըստ տեղամասերի) իրականացվում է.</p> <p>ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 00-ից սկսած</p>	ԸՕ 6, մաս 10	Փետրվարի 21-ի ժամը 00-ից սկսած	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
69	<p>Տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները՝ ըստ հանրաքվեի տեղամասերի աղյուսակավորվում են.</p> <p>պարբերաբար, բայց ոչ ուշ, քան երեք ժամը մեկ</p>	ԸՕ 71, մաս 2	Մինչև փետրվարի 21-ի ժամը 8.00-ն	Հանրաքվեի տարածքային հանձնաժողով

70	Տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, փակցվում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում. անհապաղ	Հոդված 71, մաս 3	Մինչև փետրվարի 21-ի ժամը 8.00-ն	Հանրաքվեի տարածքային հանձնաժողովի նախագահ
71	Հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է. նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո	ՀՄՕ 32, մաս 7	Մինչև փետրվարի 21-ի ժամը 8.00-ն	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ
72	Հանրաքվեի փաստաթղթերի ընդհանուր փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը հանրաքվեի տարածքային հանձնաժողով ներկայացվում են. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում	ՀՄՕ 32, մաս 8 ԸՕ 69, մաս 9	Մինչև փետրվարի 21-ի ժամը 10.00-ն	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ և քարտուղար
73	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների կնիքները՝ հանրաքվեի փաստաթղթերի ընդհանուր փաթեթի հետ միաժամանակ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով ներկայացվում են. քվեարկության ավարտից հետո	ԸՕ 57, մաս 5	Մինչև փետրվարի 21-ի ժամը 20.00-ն	Հանրաքվեի տարածքային հանձնաժողով
74	Արտերկրյա տեղամասերում քվեարկության արդյունքներն ամփոփվելուց, դրա վերաբերյալ արձանագրություն կազմվելուց հետո՝ հանրաքվեի փաստաթղթերի հետ միասին, կնքված վիճակում, հատուկ փոստով ուղարկվում են հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով. անհապաղ	ԸՕ 59, մաս 1	Մինչև փետրվարի 21-ի ժամը 10.00-ն	ԼՂՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավար
75	Ընտրատարածքում հանրաքվեի նախնական արդյունքներն արձանագրվում, հանրաքվեի տարածքային հանձնաժողովի նախագահի կողմից հրապարակվում և պաշտոնապես ուղարկվում են հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում	ՀՄՕ 33, մաս 2	Մինչև փետրվարի 21-ի ժամը 14.00-ն	Հանրաքվեի տարածքային հանձնաժողով
76	Հանրաքվեի տարածքային հանձնաժողովներից ստացված՝ հանրաքվեի նախնական արդյունքների հիման վրա, հանրաքվեի նախնական արդյունքները հրապարակվում են. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 28 ժամվա ընթացքում	ՀՄՕ 34, մաս 1	Մինչև փետրվարի 21-ի ժամը 24.00-ն	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
77	Ընտրատարածքում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմվում է. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում՝ հինգ օր հետո	ՀՄՕ 33, մաս 3	Մինչև փետրվարի 22-ի ժամը 20.00-ն կամ մինչև փետրվարի 25-ի ժամը 20.00-ն	Հանրաքվեի տարածքային հանձնաժողով

78	<p>Հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն հանրաքվեի տարածքային հանձնաժողով. քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն</p>	ԸՕ 47, մաս 1	Մինչև փետրվարի 21-ի ժամը 18.00-ն	Հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա գտնված անձ, հատուկ կարծիք հայտնած հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի անդամ
79	<p>Վերահաշվարկն իրականացվում է. վերահաշվարկի դիմումների ընդունման ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը՝ ժամը 14.00-ն</p>	ԸՕ 47, մաս 6	Փետրվարի 22-ի ժամը 9.00-ից սկսած մինչև փետրվարի 25-ի ժամը 14.00-ն	Հանրաքվեի տարածքային հանձնաժողով
80	<p>Ընտրատարածքներում հանրաքվեի վերջնական արդյունքների ամփոփիչ արձանագրությունների հիման վրա հանրաքվեի ամփոփիչ արձանագրություն կազմվում է. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում՝ 6 օր հետո</p>	ՀՄՕ 34, մաս 2	Մինչև փետրվարի 23-ի ժամը 20.00-ն կամ մինչև փետրվարի 26-ի ժամը 20.00-ն	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
81	<p>Հանրաքվեի վերջնական արդյունքները ԼՂՀ հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակվում են. հանրաքվեի արդյունքների վերաբերյալ որոշում ընդունվելուց հետո՝ 3 ժամվա ընթացքում</p>	ՀՄՕ 34, մաս 6	Փետրվարի 23-ին կամ փետրվարի 26-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ կամ նրա համաձայնությամբ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի որևէ անդամ
82	<p>Հանրաքվեի մասնակիցների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնում մնում են փակցված. մինչև հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի լիազորությունների դադարման օրը</p>	ԸՕ 11, մաս 4	Մինչև փետրվարի 25-ը	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
83	<p>Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ հանրաքվեի վերաբերյալ զեկուլյցները կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. ներկայացնելուց հետո՝ ողջամիտ ժամկետներում</p>	ԸՕ 29, մաս 3	Փետրվարի 21-ից սկսած	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով

84	<p>Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովը հանրաքվեի տարածքային հանձնաժողովին, իսկ հանրաքվեի տարածքային հանձնաժողովը հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովին ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է.</p> <p>հանրաքվեից հետո՝ համապատասխանաբար տասնօրյա ժամկետում և քսանօրյա ժամկետում</p>	ԸՕ 23, մաս 4	Մինչև մարտի 2-ը և մարտի 12-ը	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով, Հանրաքվեի տարածքային հանձնաժողով
85	<p>Կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը ԼՂՀ վերահսկիչ պալատ ներկայացվում է.</p> <p>ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում</p>	ԸՕ 23, մաս 4	Մինչև մարտի 21-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
86	<p>Հանրաքվեից հետո քարոզչության հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում են պետական բյուջե.</p> <p>հանրաքվեի արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուց հետո</p>	ԸՕ 26, մաս 7	Մայիսի 26-ից հետո	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
87	<p>Հանրաքվեի կազմակերպման և անցկացման, խախտումների վերլուծության վերաբերյալ հաղորդագրությամբ և առաջարկություններով Ազգային ժողովում հանդես է գալիս.</p> <p>հանրաքվեի արդյունքների հրապարակումից հետո՝ երեք ամսվա ընթացքում</p>	ԸՕ 48, մաս 2	Մինչև մայիսի 26-ը	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ կամ նրա համաձայնությամբ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի որևէ անդամ

Ծանոթություն-Հանրաքվեի հանձնաժողովների աշխատաժամերն են՝ 9.00-ից մինչև 18.00, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի, եթե <Հանրաքվեի մասին> ԼՂՀ օրենքով, ԼՂՀ ընտրական օրենսգրքով և սույն ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ:

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս.ՄԵԼՔՈՒՄՅԱՆ